ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

ԹԻՎ ՍՑ-ԷՍ-2019/10

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.01.2019թ. թիվ 26-3/370-19 գրությամբ «Ա.Բ.Մեդ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 01573077/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 09.01.2019թ. թիվ ՀՀ/06.3/24-19 գրության հիման վրա, 15.01.2019թ. նախաձեռնել է «Ա.Բ.Մեդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ առողջապահության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ առողջապահության նախարարությունը 09.01.2019թ. թիվ ՀՀ/06.3/24-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ բժշկական նշանակության ապրանքներ ձեռքբերելու նպատակով, իրականացվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով գնման ընթացակարգ: Գնման ընթացակարգի գնահատման և ամփոփման արդյունքում «Ա.Բ.Մեդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատվել են անբավարար և մերժվել՝ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու հիմքով»:

Պատվիրատուն ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Ա.Բ.Մեդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է «Ա.Բ.Մեդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն ընձեռելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.01.2019թ. թիվ 26-3/370-19 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Լիլիթ Մկրտչյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2019/10 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.01.2019թ. թիվ 26-3/370-19 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ առողջապահության նախարարության 09.01.2019թ. թիվ ՀՀ/06.3/24-19 գրությունը, «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 29.10.2018թ. նիստի թիվ 6 և 12.11.2018թ. նիստի թիվ 7 արձանագրությունները, «Ա.Բ.Մեդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, «Ա.Բ.Մեդ» ՍՊԸ-ի Բողոքներ քննող անձին հայտնած բանավոր դիրքորոշումը.

ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ էր ներկայացրել «Ա.Բ.Մեդ» ՍՊԸ-ն՝ Աճուրդի 5-րդ և 24-րդ չափաբաժինների մասով:

Հանձնաժողովի 29.10.2018թ. նիստի թիվ 6 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 5-րդ և 24-րդ չափաբաժինների մասով Ընկերությանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության 7-րդ կետով Հանձնաժողովը որոշել է ծանուցել «Ա.Բ.Մեդ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումը ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը և բնութագրերը՝ Աճուրդի 5-րդ և 24-րդ չափաբաժինների մասով:

Այնուհետև, 12.11.2018թ. կայացած նիստի թիվ 7 արձանագրության 2-րդ կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Ա.Բ.Մեդ» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելուց, քանի որ ներկայացրել է սխալ գնային առաջարկ (միավորի գին):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի

նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի՝

• 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով՝ արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով համակարգը արտացոլում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում հարկի գումարի ավտոմատ հաշվարկման նպատակով մասնակիցը պարտադիր կարգով գնային առաջարկում նշում է հարկի դրույքաչափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց նույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման: Մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

• 8.4 կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

• 8.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը ՀՀ ռեզիդենտ է, ապա պայմանագրի նախագիծը հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, իսկ պայմանագրի (կանխավճարի) ապահովման բնօրինակը ներկայացնում է պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:
- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:
- 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:
- 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Ա.Բ.Մեդ» ՍՊԸ-ն ընտրված մասնակից է ճանաչվել Աճուրդի 5-րդ և 24-րդ չափաբաժինների մասով, սակայն հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Հաշվի առնելով, որ «Ա.Բ.Մեդ» ՍՊԸ-ն որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց, հետևաբար Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «Ա.Բ.Մեդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.01.2019թ. թիվ 26-3/370-19 գրությամբ «Ա.Բ.Մեդ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 01573077/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Ա.Բ.Մեդ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ